ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2019թ. N ------- - Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի
N106-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 53-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ի մասով և հաշվի առնելով «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի գործունեության ընդլայնումը և դրանով պայմանավորված հաստիքների ավելացման անհրաժեշտությունը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի հունիսի 17-ի «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N106-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N106-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի ավագանու 23.04.2019թ. №90-Ա որոշմամբ ստեղծվել է «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկը (այսուհետ՝ Հիմնարկ), իսկ Երևան քաղաքի ավագանու 17.06.2019թ. №106-Ա որոշմամբ հաստատվել են Հիմնարկի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:

«Սանիթեք» ՍՊԸ-ի հայաստանյան մասնաճյուղը և «Սանիթեք Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ն հրաժարվել և ամբողջությամբ դադարեցրել են Երևան քաղաքի ամբողջ վարչական տարածքում ինչպես աղբահանության, այնպես էլ՝ սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման աշխատանքները:

Երևան քաղաքի սանիտարական մաքրման աշխատանքներն առավել պատշաճ կերպով իրականացնելու համար նախատեսվել էր ձեռք բերել փոշեկուլներ:

Հաշվի առնելով, որ վերոհիշյալ փոշեկուլների ձեռքբերման գործընթացը ժամանակատար է՝ անհրաժեշտություն է առաջացել Հիմնարկի հաստիքացուցակում կատարել փոփոխություններ և ժամանակավորապես ավելացնել հավաքարարների քանակը:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N106-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի հունիսի 17-ի N106-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N106-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի հունիսի 17-ի N106-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում ծախսերի փոփոխություն չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2019 թվականի ---------- ------ - ի
N --------- - Ա որոշման

«ԵՐԵՎԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

h/h	Կատուցվածքային ստորաբաժանման անվանումը
1	Ֆինանսատնտեսական բաժին
2	Ավտոպարկի և տեխնիկական միջոցների համակարգման և կառավարման բաժին
3	Սանմաքրման կառավարման և համակարգման բաժին
4	Աղբահանության կառավարման և համակարգման բաժին

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

դրամ

h/h	Հաստիքների անվանումը	Հաստիքների քանակը	Հաստիքի ամսական պաշտոնային դրույքաչափը	Ընդամենը ամսական աշխատավարձը
	Աշխատակազմ			
1	Տնօրեն	1	850,000	850,000
2	Տնօրենի տեղակալ	1	650,000	650,000
3	Տնօրենի օգնական	1	240,000	240,000
4	SS Մոնիտորինգի պատասխանատու	1	350,000	350,000
5	Իրավաբան/խորհրդատու	1	350,000	350,000
6	Վերահսկողության պատասխանատու	3	250,000	750,000
	Ֆինանսատնտեսական բաժին			
7	Բաժնի պետ - գլխավոր հաշվապահ	1	650,000	650,000
8	Գնումների համակարգման և կազմակերպման մասնագետ	1	350,000	350,000
9	Հաշվապահ	2	350,000	700,000
10	Անձնակազմի կառավառման բաժնի պետ	1	350,000	350,000
11	Անձնակազմի կառավարման մասնագետ	1	250,000	250,000

h/h	Հաստիքների անվանումը	Հաստիքների քանակը	Հաստիքի ամսական պաշտոնային դրույքաչափը	Ընդամենը ամսական աշխատավարձը
12	Տնտեսվար	1	200,000	200,000
13	Հավաքարար	2	120,000	240,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**17**		**5,930,000**
	Ավտոպարկի և տեխնիկական միջոցների համակարգման և կառավարման բաժին			
14	Գլխավոր ինժեներ	1	600,000	600,000
15	Ավտոպարկի և տեխնիկական միջոցների պատասխանատու/ ինժեներ	2	350,000	700,000
16	Թափքի վարպետ	3	250,000	750,000
17	Ավտոէլեկտրիկ	2	250,000	500,000
18	Վառելիքի և նյութատեխնիկական պահեստի պատասխանատու	1	300,000	300,000
19	Պահակ	4	180,000	720,000
20	Տեխնիկական վարպետ / բանվոր	4	250,000	1,000,000
21	Ավտոլվացող	2	150,000	300,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**19**		**4,870,000**
	Սանմաքրման կառավարման և համակարգման բաժին			
22	Բաժնի պետ	1	500,000	500,000
23	Խմբավար պատասխանատու	24	300,000	7,200,000
24	Հավաքարար	300	200,000	60,000,000
25	Աղբամաններն ախտահանող բանվոր	4	200,000	800,000
26	Սանիտարական մաքրման բազմաֆունկցիոնալ մեքենայի վարորդ (սեզոնային)	70	290,000	20,300,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**399**		**88,800,000**
	Աղբահանության կառավարման և համակարգման բաժին			
27	Բաժնի պետ	1	500,000	500,000
28	Գծային պատասխանատու	24	300,000	7,200,000
29	Վարորդ	118	290,000	34,220,000
30	Բանվոր	275	240,000	66,000,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**418**		**107,920,000**
	ԱՄԲՈՂՋԸ	**853**		**207,520,000**